**DOI: 10.61484/29538181-ss.8.23-99**

# ԻՐԱՎՈՒՆՔԻ ԷՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՀԱՍԿԱՑՄԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

**[1,2]Գառնիկ Սաֆարյան, [1]Լևոն Հարությունյան**

[1]Երևանի Հայբուսակ Համալսարան

[2]ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտ

Ընդունված է տպագրության 03.06.2023

***Ամփոփագիր.*** Սույն հոդվածում հեղինակները հանգամանորեն վերլուծության են ենթարկում իրավունքի էության և իրավահասկացման տիպաբանության հիմնախնդիրները, ինչպես նաև քննարկում են դրանց գիտական հետազոտության մեթոդաբանական մոտեցումները՝ ժամանակակից իրավագիտության և գիտական ճանաչողության տեսանկյունից:

***Հիմնաբառեր.*** իրավունք, իրավահասկացություն, գիտական հայեցակարգ, մեթոդաբանական հիմունքներ, դիալեկտիկական և հատուկ մեթոդներ, իրավագոյակցություն, իրավակիրառում, իրավական մեկնություններ:

Իրավունքի էության և հասկացման հիմնախնդրրը դասվում է հավերժականների թվին: Իրավունքի, որպես սոցիալական իրականության երևույթի օբյեկտիվությունը միաժամանակ ենթադրում է սուբյեկտիվ հայացք նրա կերպարի, նկարագրի վերաբերյալ [1]: Համապատասխանաբար, իրավունքի ընկալման առումով կարելի է առանձնացնել երկու հիմնական մոտեցում: Պայմանականության որոշակի չափով այդ մոտեցումները կարելի է անվանել գործիքային և մշակութաբանական:

Գործիքային մոտեցման համատեքստում իրավունքը ի սկզբանե ընկալվել է որպես միջոց, որի օգնությամբ սահմանվել են վարքի համանշանակալից և համապարտադիր կանոններ, լուծվել են վեճեր և կոնֆլիկներ, որոշվել և իրականացվել են իրավունքով ամրագրված կանոնների խախտման համար պատասխանատվության միջոցներ:

Որպես հասարակական հարաբերությունների կարգավորման ու պաշտպանության գործիք, իրավունքը ծագել է սոցիալական զարգացման ամենավաղ փուլերում և զարգացել հասարակության հետ միասին: Դրա հետ մեկտեղ իրավագոյացման և իրավակիրառման գործընթացները երկար ժամանակ կրել են տարերային բնույթ, ինչը պայմանավորված էր սոցիալական զարգացման օբյեկտիվ օրինաչափություններով: Այս օրինաչափությունների հիմքում դրված են պատճառա-հետևանքային կապերը և համակարգերի ձևավորման ընդհանուր սկզբունքները: Ցանկացած համակարգ, այդ թվում նաև սոցիալական համակարգը, զարգանում է առնվազն երեք պահերով. Ինքնապահպանման, ինքնաքայքայման և ինքնազարգացման ազդեցության ներքո: Նշված միտումների հզորացումը կամ թուլացումը հանդես է գալիս մի կողմից՝ որպես նախորդող դեպքերի հետևանք, իսկ մյուս կողմից՝ հաջորդող փոփոխությունների պատճառ:

Իրավունքի առաքելությունը սոցիալական գոյում պայմանավորված է հասարակական հարաբերությունների կանոնակարգվածության և պաշտպանվածության ձգտումով: Համապատասխանաբար, իրավունքը, որպես սոցիալական ներազդման գործիք ի սկզբանե ուղղված է կատարելու հիմնականում երկու գործառույթ՝ կարգավորիչ և պահպանիչ: Իրավունքի էության և հասկացման վերաբերյալ գործիքային մոտեցումը ենթադրում է նրա

գնահատում կիրառական նշանակելիությւսն տեսակետից, ընդ որում իրավունքը անքակտելիորեն կապված է կազուսի՝ իրավական գործիքների միջոցով լուծվող կենսական կոնկրետ իրավիճակի հետ: Հնագույն շրջանում իրավական կարգավորման հիմնական նորմատիվ միջոց էր արգելքը, իսկ իրավական կարգավորումը հանգում էր արդարադատության, այսինքն, կանոնի խախտման մեղավորության պարզմանը և պատժի սահմանմանը: Սոցիալական հարաբերությունների աստիճանաբար բարդացումը պայմանավորեց իրավական կարգավորման նորմատիվ հիմքերի և գործընթացների բարդացմանը, ինչը, իր հերթին, կանխորոշեց իրավական փորձի ընդհանրացման անհրաժեշտությունը:

Իրավունքի, որպես կոնկրետ կազուսի լուծման գործիքի ընկալման հետ մեկտեղ ձևավորվում է նաև պատկերացում իրավունքի՝ որպես յուրատեսակ, կյանքի կոնկրետ իրավիճակների հետ անմիջական կապ չունեցող աբստրակցիայի մասին: Նման հասկացման համատեքստում իրավունքը սկսում է ընկալվել որպես մշակույթի երևույթ, որպես արժեքային սահմանումների համակարգ:

Իրավունքի ընկալման վերաբերյալ մշակութաբանական մոտեցումը չի բացառում նրա էության գործիքային բաղադրիչը, ներկայումս իրավունքը շարունակվում է դիտարկվել որպես սոցիալական կարգավորման և պաշտպանման միջոց: Դրա հետ մեկտեղ իրավունքի ընկալումը որպես ազգային (իսկ հետագայում նաև միջազգային) մշակույթի երևույթի հանգում է «իրավունք» և «օրենք» հասկացությունների տարբերակմանը [2], իսկ դա, իր հերթին, կանխորոշում է անվերջ բանավեճ առ այն, թե ինչ է իրավունքը և ինչպես է այն հարաբերվում կարգավորիչ-պաշտպանիչ այլ համակարգերի (օրենսդրության, կրոնի, բարոյականության, սովորույթների) հետ [3]:

Իրավահասկացման ինչպես ավանդական այնպես էլ ինտեգրատիվ մոտեցումների էական և բովանդակային առումների մանրազնին վերլուծություն են իրականացրել հեղինակները սույն հետազոտության մեջ, որում փորձ է արված դիտարկել իրավունքը որպես երկմիասնական ֆենոմեն, որը տարբեր ձևով է դրսևորվում և ընկալվում օբյեկտիվ և սուբյեկտիվ իրականության պայմաններում: Իրավունքը հեղինակները դիտարկում են «ազատություն» և «անհրաժեշտություն», «օբյեկտիվ» և «սուբյեկտիվ», «գոյ» և «պարտ», «ձև» և «բովանդակություն» զույգ կատեգորիաների համադրման միջոցով:

Իրավունքի էության և իրավահասկացման ուղղություններից մեկն է իրավական երևույթների հասկացման վերաբերյալ գիտական մոտեցումների հետազոտումը: Դա թույլ է տալիս բացահայտել իրավական երևույթին բնորոշ գծերը, ավելի լավ տեսնել նրա տարբեր դրսևորումները, այսինքն վերլուծել տարբեր հայեցայկարգերի շրջանակներում ստացված գիտելիքները և դրանց գիտական մշակման եղանակով ստանալ իրավունքի մասին որակապես նոր գիտելիքներ: Որպես գիտա- ճանաչողական օբյեկտներ հանդես եկող իրավահասկացման հայեցակարգերը հետազոտվում են որոշակի մեթոդների, եղանակների, հնարքների օգնությամբ: Իրավաճանաչման գործընթացում «մեթոդաբանական նշանակություն ունի այն ամենը, ինչը հնարավորություն է տալիս իրագործել մեր ճանաչողական հետաքրքրասիրությունը, ինչպես նաև այն, ինչը ունակ է կազմակերպել հետազոտման գործընթացը ըստ ընտրված առարկայի և սրբագրել այն ամեն անգամ, երբ ծագի նման

անհրաժեշտություն»[4]: Դրա հետ մեկտեղ «տարբերությունը մի կողմից մեթոդի, իսկ մյուս կողմից եղանակի, հնարքի, հաշվարկի, ձևի միջև կայանում է նրանում, որ մեթոդը իրենից ներկայացնում է ավելի բարդ գոյացություն, քան եղանակը և ճանաչողական այլ գործողությունները: Եղանակի տակ միշտ ենթադրվում է գործողության միայն մեկ եղանակ, օրինակ, տրամաբանական վերլուծությունը՝ դա առարկան մտովի մասնատման հնարք է: Իսկ մեթոդը որոշակի ձևով կանոնակարգված ճանաչողական գործողությունների ամբողջականություն է [5]»:

Ըստ փիլիսոփայական կատգորիաների, ինչպիսին է ընդհանուրի, մասնավորի և առանձնահատուկի, գիտական ճանաչման մեթոդները բաժանվում են.

1) դիալեկտիկական մեթոդի, որը բնութագրվում է համընդհանրությամբ,

2) գիտական ճանաչման ընդհանուր մեթոդների,

3) հետազոտման մասնավոր-գիտական մեթոդների [6]:

Այս բաժանումը կիրառելի է նաև իրավական երևույթների, այդ թվում նաև «իրավահասկացում» ֆենոմենի հետազոտման մեթոդների վերաբերյալ:

Ճանաչման համընդհանուր դիալեկտիկական մեթոդի հիմքը, առաջին հերթին, կազմում են դիալեկտիկայի՝ բնության, հասարակության և մտածողության առավել ընդհանուր օրենքների մասին գիտության սկզբունքները [7]: Ժամանակակից իրավաբանական գիտության մեջ գոյություն ունի տվյալ մեթոդի իդեալիստական և մատերիալիստական ընկալման մոտեցումներ: Դիալեկտիկայի մեթոդի բովանդակությունը կազմում են դիալեկտիկայի հիմնական օրենքներն ու կատեգորիաները: Օգտագործելով դրանք պետաիրավական երևույթների վերլուծման ժամանակ, կարելի է ներթափանցել պետության և իրավունքի էության մեջ, պարզել դրանց բնույթը, պետության, իրավաստեղծման և իրավակիրառման գործունեության մեխանիզմն ու առանձնահատկությունները: Դիալեկտիկայի մեթոդի կիրառումը իրավունքի հասկացության գիտական մոտեցումների հետազոտման ընթացքում ենթադրում է դիմել այնպիսի սկզբունքների կիրառմանը, ինչպիսիք են գիտական հայեցակարգերի ներքին հակասականությունը և ամբողջականությունը, գիտական մտքի զարգացման կրկնողականությունն ու առաջընթացը, գիտական տեսությունների ժառանգականությունը և այլն [8]:

Ընդհանուր մեթոդները կարելի է օգտագործել ոչ միայն իրավական տեսություններ, ուսմունքներ, հայեցակարգեր, այլև այլ երևույթների ուսումնասիրման համար, ընդ որում ոչ միայն և ոչ անպայման իրավական գիտության օբյեկտ հանդիսացող երևույթների: «Ընդհանուր մեթոդների կիրառման բնագավառը անհամեմատ ավելի լայն է, քան մասնավոր մեթոդների, սակայն համընդհանրայնությամբ դրանք օժտված չեն, քանի որ կիրառվում են գիտական ճանաչման ոչ բոլոր օբյեկտների հանդեպ» [9]: Դրանք են, օրինակ, համեմատման, վերլուծման, սինթեզի, վերացարկման, համակարգային, կառուցվածքային և ֆունկցիոնալ մոտեցման, նվազ ընդհանուր հասկացության բերումը առավել ընդհանուր հասկացության և այլ մեթոդներն են [10]:

Իրավական երևույթի հասկացման վերաբերյալ մոտեցումների հետազոտման մասնավոր-գիտական մեթոդները բնութագրվում են առավելագույն մասնագիտացմամբ, դրանց կիրառման ավելի կոնկրետացված բնագավառներով: Այդ իսկ պատճառով

իրավաբանական գրականության մեջ մասնավոր մեթոդների առումով հասկանում են, ըստ էության, նույն ընդհանուր մեթոդները, որոնք կիրառվում են կոնկրետ երևույթի ճանաչման ընթացքում: Այսպես, օրինակ, Մ.Ն. Մարչենկոն իրավական երևույթների ճանաչման մասնավոր մեթոդների թվին է դասում համեմատական-իրավական մեթոդը, իրավական որոշումների մշակման մեթոդը, իրավունքի նորմերի մեկնաբանումը [11]: Դժվար չէ նկատել, որ նշված մեթոդները ոչ այլ ինչ են, քան ճանաչման ընդհանուր մեթոդների (համեմատական, որոշումների մշակման, մեկնման) տարածում (էքստրապոլյացիա) կոնկրետ ոլորտի վրա' հետազոտելու համար երևույթների այն շրջանակը, որը ընդունված է անվանել իրավական: Այսպիսով, որպես իրավունքի հասկացման վերաբերյալ մոտեցումների հետազոտման հատուկ մեթոդներ կարող են դիտարկվել, օրինակ, գիտական այն տեսությունների, հայեցակարգերի համեմատումը, որոնց շրջանակներում ձևավորվում է իրավունքի որոշակի հասկացությունը, ինչպես և տեսական հայեցակարգերի մոդելավորումը, իրավունքի հասկացման վերաբերյալ մոտեցումների վերլուծությունը, գիտական իրավական հայեցակարգերի սինթեզը, «իրավահասկացում» երևույթի հետազոտման կառուցվածքային-ֆունկցիոնալ մեթոդը և այլն [12]:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ իրավագիտության մեջ լայնորեն օգտագործվում է տիպաբանման ընդհանուր-գիտական մեթոդը [13], այսինքն, գիտական ճանաչման այն մեթոդը, որի հիմքում ընկած է օբյեկտների համակարգի մասնատումը և դրանց խմբավորումը ընդհանրացված մոդելի կամ տիպի օգնությամբ [14]: Տվյալ մեթոդը հիմնականն է իրավահասկացման հիմնահարցի հետազոտման ընթացքում և կիրառվում է իրավունքի մասին կոնկրետ պատկերացումների և հասկացությունների էական հատկանիշների համեմատական վերլուծության, ընդհանրացված իդեալացված իրավական մոդելների միջև կապերի բացահայտման համար, ինչը, վերջի հաշվով, կանխորոշում է նոր գիտելիքների ձեռքբերումը ինչպես բուն իրավահասկացման, այնպես էլ ընդհանրապես իրավունքի մասին:

Ելնելով տիպաբանության մեթոդաբանական ընդհանուր հասկացությունից, իրա- վահասկացման տիպաբանությունը կարելի է բնորոշել որպես գիտա- իրավաբանական ճանաչման մեթոդ, որի հիմքում ընկած է իրավահասկացման, որպես միասնական հա- մակարգային երևույթի, մասնատումը առանձին տարրերի և դրանց խմբավորումը ըստ տիպերի: Սակայն հետազոտելով իրավահասկացման տիպաբանությունը, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տիպաբանությունը ոչ միայն մեթոդաբանական մոտեցում է ճանաչման հանդեպ, այլև այն, ինչը ստացվել է դրա կիրառման հետևանքով՝ տիպաբանական նկարա- գրման ու համեմատման արդյունքը [15]: Դրան համապատասխան, սույն հոդվածում տիպաբանությունը հասկացվելու է լայն իմաստով, տերմինաբանական իր երկու իմաստներով, այսինքն, և որպես «իրավահասկացում» երևույթի ճանաչման վերաբերյալ մեթոդաբանական մոտեցում, և որպես այդ մեթոդի կիրառման արդյունք:

Իրավահասկացման տիպաբանության մեր ձևավորված հասկացությունից երևում է, որ իր զույգ առումներում դիտարկվող երևույթի հիմքում ընկած է խմբավորումը ըստ տիպերի: Այսպիսով, իրավահասկացման տիպի հասկացությունը ելային է և դրա մեկ- նաբանությունից է կախված, ըստ էության, նաև իրավահասկացման տիպաբանական

մեկնումն ընդհանրապես: Դրա հետ մեկտեղ իրավաբանական գրականության մեջ իրավահասկացման տիպին բնորոշումներ տալու փորձեր բավականին հազվադեպ են: Առավել հաճախ հեղինակները դիմում են տվյալ կատեգորիային որպես ինքնին հասկանալի, բոլորին հայտնի և հավելյալ բացատրություններ չպահանջող ինչ-որ բանի: Նույնիսկ ուսումնական գրականության մեջ, որը պետք է աջակցի ուսանողների մոտ հասկացողական ապարատի ձևավորմանը, այդ հսկ պատճառով պահանջելով հավելյալ բացատրություններ օգտագործվող եզրույթների վերաբերյալ, իրավահասկացման հիմնահարցի դիտարկումը սկսվում է, որպես կանոն, միանգամից հիմնական տիպերից, իսկ լավագույն դեպքում՝ տիպաբանության չափանիշերից [16]:

Ի՞նչ է իրավահասկացման տիպը:

Մեր կարծիքով առավել մոտ իմաստով «տիպ» բառը բացատրվում է որպես օրինակ, նմուշ կամ տարբերակ, ձև, որին համապատասխանում է առարկաների, երևույթների որոշակի հայտնի խումբ: Գիտության բնագավառների առնչությամբ տիպի հասկացությունը կոնկրետացվում է, սակայն առանց էական տարբերությունների: Այսպես, օրինակ, խորհրդային հայտնի գիտնական-տրամաբան Ն. Ի. Կոնդակովդ բնորոշում է տիպը որպես «նմուշ, որը արտահայտում է առարկաների, երևույթների ընդհանուր, էական գծերը», որպես «ձև, տեսակ, մոդել, որին համապատասխանում է օբյեկտների որոշակի դաս» [17]:

Ելնելով վերոշարադրյալից, կարելի է ձևակերպել իրավահասկացման տիպի իրավահասկացման տիպը՝ իրավական երևույթի ընդհանրացված հայեցակարգային մոդելն է, որն արտացոլում է իրավական կոնկրետ պատկերացումների և հասկացությունների որոշակի բազմության ընդհանուր էական հատկանիշները, իսկ այդ պատկերացումներն ու հասկացություններն, իրենց հերթին, համապատասխանում են այդ հայեցակարգային մոդելին որպես նմուշի: Մեր կարծիքով, միանգամայն ընդունելի կարող է համարվել Ա. Վ. Պոլյակովի **առաջարկած** բնորոշումը, համաձայն որի իրավահասկացման տիպը՝ «իրավունքի որոշակի պատկերն **է,** որը բնութագրվում է իրավունքի առավել ընդհանուր տեսական հատկանիշների և դրա հանդեպ պրակտիկ (արժեքային) վերաբերմունքի առավել ընդհանուր վերաբերմունքի ամբողջականությամբ» [18]:

Պատկանելիությունը իրավահասկացման այս կամ այն տիպին որոշիչ նշանակություն ունի իրավունքի մասին ցանկացած տեսության համար: «Հենց իրավահասկացման տիպն է բնորոշում իրավաբանական ճանաչման պարադիգմը (իմաստային մոդելը, սկզբունքը և նմուշը), իրավունքի մասին համապատասխան ուսմունքի գիտա-իրավական բովանդակությունը, առարկան և մեթոդը» [19]: Դրա հետ մեկտեղ իրավահասկացման տիպը պայմանավորվում է սուբյեկտի ընդհանուր աշխարհաընկալմամբ: Եվ այդ իմաստով «իրավահասկացման տիպը» իրենից ներկայացնում է իրավունքի իմաստային մոդել, որը բնորոշվում է նրա աղբյուրներով [20]:

Վերադառնալով տիպի հասկացությունից բուն տիպաբանության հարցին, հարկ է նշել, որ տիպաբանությունը իրենից ներկայացնում է դասակարգման տարատեսակ [21]: Դրա հետ մեկտեղ պետք է հաշվի առնել, որ ըստ հիմքերի էական աստիճանի առանձնացնում են դասակարգման երկու տեսակ, արհեստական ու բնական: Արհեստական է

համարվում այն դասակարգումը, որտեղ որպես տարաբաժանման չափանիշեր են հանդես գալիս ոչ էական հատկանիշները (օրինակ, այբուբենային-առարկայական տեղեկատուն): Բնական է հանդիսանում այն դասակարգումը, որում որպես հիմք են վերցնում էական հատկանիշները, ինչը թույլ է տալիս դիտարկել դասակարգումը որպես դասակարգվող օբյեկտների մասին գիտելիքների աղբյուր: Իրական աշխարհի օբյեկտները գիտականորեն կարելի դասակարգել միայն այն պայմանով, եթե դրա հիմքում ընկած են ոչ թե պատահական, արտաքին, այլ ներքին որոշիչ հատկանիշները, բացահայտված ուսումնասիրվող գործընթացի և դրան հարակից երևույթների համակողմանի, պատմական առումը հաշվի առնող վերլուծության արդյունքում: Այդ իսկ պատճառով իրավահասկացման տիպաբանությունը ոչ թե իրավական ընկալումների, հասկացությունների, պատկերացումների ցանկացած դասակարգում է, այլ գիտական դասակարգում, իրականացված հենց ըստ էական հատկանիշների:

Ինչպես արդեն նշել ենք վերը, իրավահասկացման տիպաբանությունը՝ գիտական դասակարգում է, այսինքն, ըստ էական հատկանիշերի իրականացված դասակարգում, ընդ որում ըստ կառուցվածքի առանձնացնում են տիպաբանության երկու հիմնական տեսակ՝ էմպիրիկ և տեսական [22]: Իրավահասկացման տիպաբանության առումով տիպաբանության այս երկու տեսակները կարող են բնութագրվել հետևյալ կերպ.

Իրավահասկացման էմպիրիկ տիպաբանությունը կառուցվում է իրավահասկացման տարբեր սուբյեկտների իրավական ընկալումների, պատկերացումների, հասկացությունների մասին փորձնական տվյալների քանակական մշակման և ընդհանրացման, իրավական տարբեր պատկերների միջև նմանության ու տարբերության հաստատուն հատկանիշների ամրագրման, տիպաբանական նկարագրման ու համեմատման արդյունքների համակարգման ու համապատասխան գիտական մեկնաբանման հիման վրա:

Որպես էմպիրիկ տիպաբանության օրինակ կարելի է բերել Գ.Գ. Բերնացկու առաջարկած տիպաբանությունը: Հեղինակն առաջարկում է ւիիլիսոփա-իրավական ուղղությունների հետևյալ տիպերը.

1) աստվածաբանական, որի կողմնակիցները իրավունքի էությունը կապում են Աստծո կամքի հետ,

2) բնապաշտական, որի հետևորդները իրավունքի էությունը տեսնում են բնական, բանականության, իշխող տիեզերքի մեջ,

3) օբյեկտիվ-իդեալիստական, որի կողմնակիցները իրավունքի էությունը դուրս են բերում օբյեկտիվ ոգուց՝ գերզգայական գերագույն հոգևոր սկզբից,

4) սուբյեկտիվ-իդեալիստական, որն իրավունքի էությունը որոնում է մարդու բանականության, գիտակցության, հոգեբանության մեջ,

5) միստիկական, որի կողմնակիցները բացատրում են իրավունքի էությունը առեղծվածային, գերզգայական հոգևոր ինչ-ինչ ուժերի մեջ,

6) տնտեսական, որի շրջանակներում իրավունքի էությունը բացատրվում է տնտեսական հարաբերություններով,

7) քաղաքագիտական, որը կապում է իրավունքի էությունը քաղաքական հարաբերությունների, քաղաքական գործունեության հետ,

8) սոցիալական (նեղ իմաստով), որի ջատագովները մեկնում են իրավունքը, հենվելով սոցիալական հարբերությունների վրա,

9) ձևական-դոգմատիկ, որն իրավունքի էությունը հանգեցնում է գործող օրենսդրությանը [23]:

Ձգտելով ընդգրկել փիլիսոփա-իրավական տիպերի ողջ բազմազանությունը, առանձնացված բնորոշ գծերի հիման վրա նշված հեղինակը ցույց չի տալիս դրանց միջև եղած փոխկապակցությունները: Տիպերից յուրաքանչյուրը առանձնացված է զուտ էմպիրիկ կերպով և հանդես է գալիս կարծես թե ինքնին, առանց այլ տիպերի հետ կապերի, միասնական' համակարգից դուրս: Նման տեսակի տիպաբանության էական թերությունն է սահմանված օրինաչափության բացակայությունը՝ օրինաչափության, որը կարող էր էվրիստիկ բնույթ տալ իրավահասկացման տիպաբանության տիպերին: Թերևս ինքը Գ.Գ. Բերնացկին նշում է, որ տվյալ տիպաբանությունը տառապում է մի շարք թերություններով: Այն, ըստ երևույթին, երբեք չի կարող ամբողջական լինել: Բավականաչափ ուշադիր հետազոտության դեպքում այս կամ այն մտածողների գործերում միշտ կարելի է գտնել գոյի որևէ ոլորտ, որին հանգեցվում է իրավունքը և որը չի մտել ելային տիպաբանության մեջ: Մեկ այլ թերություն կարելի է համարել այն, որ, ասենք, իրավական տարբեր պատմության մեջ այնքան հայտնի բնական իրավունքի տարբեր հայեցակարգերը պետք է, ըստ նոր տիպաբանության, վերաբերվեն տարբեր տիպերին՝ մեկ բնապաշտական, մեկ օբյեկտիվ-իդեալիստական, մեկ սուբյեկտիվ-իդեալիստական [24]:

Նշելով էմպիրիկ տիպաբանության թերությունները, հարկ է համաձայնել նաև, որ տիպաբանական համակարգեր կառուցելիս այն անհրաժեշտ քայլ (փուլ) է օբյեկտիվ օրինաչափությունների բացահայտման ճանապարհին: Այս կապակցությամբ անհրաժեշտ է համաձայնվել Գ.Գ. Բերնացկու այն դիտողության հետ, որ «տվյալ դասակարգումը օգտակար է նրանով, որ թույլ է տալիս առնվազն նախանշել գոյի այն ոլորտները, որոնց սկզբունքորեն կարող է հանգեցվել իրավունքը» [25]: Իսկ դա, մեր կարծիքով, կարևորագույն պայմանն է փոխկապակցությունների բացահայտման և դրանց համապատասխան տեսական տիպաբանության կառուցման համար:

Իրավահասկացման տեսական տիպաբանությունը ենթադրում է իդեալական մոդելի կառուցում, որը հանդես կգա որպես առանձին կոնկրետ իրավական երևույթների հետազոտման արդյունքների ընդհանրացված ամբողջականություն: Տեսական տիպաբանության սկզբունքն է իրավահասկացման համակարգային ընկալումը, ինչը ենթադրում է առանձին տիպերի միջև գոյություն ունեցող համակարգաստեղծ կապերի, օրինաչափությունների առանձնացում: Կարծում ենք, որ հենց այդպիսի տիպաբանությունն է առավել արդյունավետ տեսական իմաստով, ծառայելով որպես օբյեկտի բացատրման և դրա տեսության կառուցման գլխավոր միջոցներից մեկը [26]:

Որպես օրինակ կարելի է բերել նորմագոյացման տիպաբանությունը ըստ օբյեկտի: Դրա իմաստը կայանում է նրանում, որ վերլուծված նյութի դիտարկման ու ամփոփման հիման վրա առանձնացվում են սուբյեկտներ, որոնք իրավական տարբեր տեսությունների շրջանակներում դիտարկվում են որպես իրավաստեղծության աղբյուրներ: Դրա հիման վրա առանձնացվում են իրավահասկացման հիմնական տիպերը, օրինակ,

աստվածաբանականը, բնական-իրավականը, պատմականը (ազգային-պահպանողականը և այլն)։ «Այնտեղ, որտեղ ամենազոր նորմաստեղծողը Աստված է, մենք գործ ունենք (աստվածաբանական (տեղոգիական՝ լատինական theos-աստված բառից) իրավահասկացման հետ: Մարդու բնությունից (էությունից), նրա բանականությունից և խղճից է ածանցվում բնական իրավունքը: Ազգային-պահպանողական իրավահասկացման աղբյուր է ազգի մենթալիտետը, նրա ինքնությունը, որն աղբյուրի պես սնում է ժողովրդի սովորութային իրավունքը և նրա էթնո-ազգային իրավական ավանդույթը: Իրավունքի ֆորմացիոն հասկացումը կապում է այն հասարակության պատմության որոշակի փուլին՝ ստրկատիրական ավատատիրական, բուրժուական, սոցիալիստական և այլն: Այն հիմնված է հասարակական կարգի հանդեպ իրավունքի ծառայողական դերի վերլուծության, առաջնային արժեքների նրա կախվածության, պատմական տվյալ դարաշրջանի համար իրավական կարգավորման համակարգաստեղծ հիմնավորումների վրա... Պոզիտիվ-իրավական տեսակետից իրավունքի աղբյուր է պետական իշխանությունը» [27]։

Տեսական տիպաբանության օրինակ կարող է ծառայել «արտահայտման ձև-հասարակական գիտակցություն-իրավական հասարակական հարաբերություններ» չափանիշի վրա հենվող տիպաբանությունը: Այս չափանիշը, որը առաջարկվել է դեռ անցյալ դարում (Ն.Ն. Ալեքսեև) [28], իսկ գուցե և ավելի վաղ, սակայն առավել լայն տարածում է գտել մեր օրերում: Դրան համապատասխան տարբերակում են իրավահասկացման երեք հիմնական տիպ. նորմատիվային, բնական-իրավական (բարոյական) և սոցիոլոգիական [29]:

Հատկանշական է, որ նշված դասակարգման կողմնակիցները ամենատարբեր կարծիքներ ունեն իրավահասկացման նշված տիպերի սոցիալական նշանակության վերաբերյալ: Առավել հաճախ համաձայնվում են, որ իրավահասկացման յուրաքանչյուր տիպը (նորմատիվային, բնական-իրավական և սոցիոլոգիականը) «ունեն իրենց հիմքերը» և հանդիսանում են իրավական երևույթի այս կամ այն կողմի արտացոլումը: Այս կապակցությամբ հատկանշական է Օ.Է. Լեստի տեսակետը: Նա նշում է, որ «հայեցակարգերից յուրաքանչյուրը արտահայտում է իրավունքի իրական կողմը և ծառայում է նրա իրականացմանը: Այսպես, իրավունքի բարոյական ընկալումը կարևոր է ինչպես իրավական դաստիարակության, այնպես էլ գործող իրավունքի զարգացման համար: Առանց իրավունքի նորմատիվային հասկացման գործնականում անհասանելի են իրավական հարաբերությունների կայունությունն ու որոշակիությունը, ինչպես նաև օրինականությունը պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության մեջ: Վերջապես, միայն սոցիալական հասկացման միջոցով է իրավունքը ձեռք բերում կոնկրետություն և գործնական իրագործում, առանց դրա այն մնում է դեկլարացիա, տեքստերի կամ բարոյական մաղթանքների համակարգ» [30]:

Որպես տնտեսական տիպաբանության օրինակ կարելի է նշել նաև Յու. Ա. Բասկինի առաջարկած տիպաբանությունը: Գիտնականը առանձնացնում է իրավահասկացման հետևյալ հիմնական տիպերը. 1) մետաֆիզիկական որը տեսնում է իրավունքի հիմքն ու նրա ծագման պատճառները սոցիալական գործոններից դուրս (և վեր), 2) մարդաբանական, որն իրավունքի հիմք է ճանաչում մարդու (անհատի) բնությունը, 3) սոցիոլոգիականը, որի կողմնակիցները համարում են, որ իրավունքը հասարակական կապերի և հարաբերությունների

արդյունք է [31]: Այստեղ հեղինակը ոչ միայն ընդգծում է իրավական տարբեր պատկերների հաստատուն հատկանիշները, դրանց միջև եղած նմանություններն ու տարբերությունները, ոչ միայն թվարկում է որոշակի հատկություններով օժտված բազմապիսի տիպեր, այլև սահմանում դասակարգիչ որոշակի չափանիշ, մեր կարծիքով, որպես հիմք ընդունելով «բնություն-մարդ-հասարակություն» համակարգաստեղծ փոխկապակցությունը:

Տեսական տիպաբանություն է առաջարկում նաև ակադեմիկոս Վ.Ս. Ներսեսյանցը: Իր կողմից զարգացվող ազատական-իրավաբանական տեսության մեջ նա առանձնացնում է իրավահասկացության երկու հիմնական տիպ. իրավաբանական և լեգիստական: Գիտնականի կարծիքով, «իրավական մտքի և իրավաբանության պատմությունն ու տեսությունը ներթափանցված են իրավահասկացման երկու հակադարձ տիպերի պայքարով: Իրավունքի հասկացման և իրավունքի հասկացության մեկնման երկու տիպերը կարելի անվանել որպես իրավաբանական («իրավունք» բառից) և լեգիստական (լատինական Lex՝ օրենք բառից)» [32]: Այս տիպաբանության հիմքում դրված է «իրավունքի և օրենքի նույնացման կամ տարբերակման պահը» [33]:

Իրավաբանական իրավահասկացման համար իրավունքը ոչ միայն կամայական և սուբյեկտիվ հրահանգ է, այլ օբյեկտիվ և ինքնուրույն, սեփական (օրենսդրի կամքից անկախ) բնույթ, էություն, յուրահատկություն, մի խոսքով, իր սկզբունքը ունեցող, որոշակի բան: Իրավունքի այդ սկզբունքն է ձևական հավասարության սկզբունքը, որն «արտահայտում է իրավունքի էությունն ու առանձնահատկությունը, կազմում իրավունքի տարբերակությունը սոցիալական այլ կարգավորիչներից, նորմերից և երևույթներից» [34]: Իրավաբանական իրավահասկացման շրջանակներում Վ.Ս. Ներսեսյանցը առանձնացնում է ազատական-իրավաբանական տիպը, համաձայն որի իրավունքը «մարդկանց ազատության համընդհանուր և անհրաժեշտ ձևն է» [35]:

Ինչպես և Վ. Ներսեսյանցը, իրավահասկացման երկու հիմնական ձև է նշում նաև Վ.Չետվերնինը: Սակայն, օգտագործելով տիպաբանության նոր չափանիշը' «իրավունքի և օրենքի տարբերակման կամ նույնացման» սզկբունքը, գիտնականը տիպաբանությանը տալիս է տերմինաբանական նոր ձևավորում, առանձնացնելով պոզիտիվիստական և ոչ պոզիտիվիստական տիպերը: Ըստ գիտնականի կարծիքի, իրավահասկացման պոզիտիվիստական տիպը հանգում է իրավունքի և օրենքի նույնացմանը (լայն իմաստով): Իրավունքի տակ պոզիտիվիստները հասկանում են «ցանկացած օրենքներ, վարչական ակտեր, դատական որոշումներ և ընդհանրապես պետական իշխանության բոլոր հրամաններ՝ անկախ դրանց բովանդակությունից» [36]:

Իրավահասկացման այս տիպի ներսում տարբերակվում են իրավունքի երկու տեսակի հասկացում, լեգիստական և սոցիոլոգիական [37]:

Իրավահասկացման ոչ պոզիտիվիստական տիպը ներառում է քաղաքական- իրավական մտքի տարբեր ուղղություններ, որոնցում «անց է կացվում իրավունքի և օրենքի տպրբերակում, բացատրվում է իրավունքի գերակայությունը օրենքի հանդեպ»: Ոչ պոզիտիվիստական տեսակետից «իրավունքը իրավացի է ոչ այն պատճառով, որ այն գրված է օրենքում և գոյություն ունի պաշտոնական ձևով, այլ բովանդակությամբ: Օրենքները պետք

է լինեն իրավական, պետք է պարունակեն իրավական նորմեր, սակայն իրականում օրենքները իրենց բովանդակությամբ կարող են լինել ոչ իրավական, կամայական» [38]: Իրավահասկացման այս տիպին է դասում Վ. Ա. Չետվերնինը իրավունքի էթիկական և իրավաբանական հասկացումը [39]: Միևնույն ժամանակ գիտնականը իրեն համարում է ազատական-իրավաբանական տիպի իրավահասկացման կողմնակից, իսկ այդ տիպը, ինչպես կարելի է հասկանալ հեղինակի դատողություններից, վերաբերում է ոչ պոզիտիվիստական տիպի տարատեսակ, որի շրջանակներում էլ տրվում է «իրավունքի բուն իրավաբանական հասկացությունը, այսինքն, այն հասկացություն, որը համապատասխանում է «իրավունք» տերմինին և բառին» [40]:

Կարծում ենք, որ Վ. Ս. Ներսեսյանցի և Վ. Ա. Չետվերնինի կողմից առաջարկված՝ իրավունքի և օրենքի հարաբերակցության չափանիշը արժանի է համակ ուշադրության, քանի որ, անշուշտ, բացահայտում է որոշակի հաստատուն կապը, օրինաչափությունը, որոնք թույլ են տալիս առանձնացնել իրավահասկացման համապատասխան տիպերը: Դրա հետ մեկտեղ որոշակի կասկածներ է հարուցում դրա աստիճանավարոման ճշտությունը: Այսպես, օրինակ, դժվար է համաձայնվել Վ. Ա. Չետվերնինի այն կարծիքի հետ, որ իրավունքի սոցիալական հասկացումը հանգում է միայն վերջինիս մեկնման որպես սոսկ «ցանկացած դատական որոշումների», առավել ևս «պետական իշխանության հրամանների՝ անկախ դրանց բովանդակությունից: Սոցիոլոգիական իրավահասկացման տեսակետից իրավունքը, առաջին հերթին, «կենդանի» հասարակական հարաբերություններն են, որոնք միայն ձևակերպվում են դատական որոշումներով: Իրավունքը բխում է բուն կյանքից, այլ ոչ պետական իշխանությունից:

Ոչ այնքան հիմնավոր ենք կարծում մենք նաև ազատական-իրավաբանական հայեցակարգի կողմնակիցների կողմից պաշտպանվող այն դրույթը, համաձայն որի իրավունքի իրավաբանական հասկացությունը հնարավոր է ձևակերպել միայն ոչ պոզիտիվիստական իրավահասկացման շրջանակներում, իսկ մյուս բոլոր հասկացությունները (լեգիստական, սոցիոլոգիական, էթիկական) իրավաբանական չեն հանդիսանում այս բառի բուն իմաստով: Մեր կարծիքով, ազատական իրավաբանական հայեցակարգի կողմնակիցները չափից ավելի են նեղացնում «իրավաբանական» հասկացության սահմանները, գործածելով այն միայն ազատության գաղափարի վերաբերյալ: Ժամանակակից իրավական գիտության մեջ «իրավաբանական» հասկացությունը ընկալվում է այլ կերպ, քան անտիկ աղբյուրներում: Այդ իսկ պատճառով չարժե դիմել jus լատինական բառի արխայիկ մեկնություններին, առավել ևս բացարձակացնել դրա անտիկ ժամանակների իմաստը ժամանակակից գիտական հայեցակարգեր կառուցելիս [41]: Հակառակ դեպքում, հետևելով նման տրամաբանությանը, անհրաժեշտ կլինի վերանայել ժամանակակից իրավական գիտության հասկացության ողջ ապարատը՝ համապատասխանեցնելու համար այն պատմականորեն ավելի վաղ և, հետևաբար, տերմինների ավելի ճշտիվ մեկնություններին [42]:

Իրավաբանական գրականության մեջ տարածված է, այսպես կոչված, դուլիստական դասակարգում, որի շրջանակներում առանձնացվում են իրավունքի հասկացության վերաբերյալ երկու մոտեցում՝ լայն և նեղ [43]: Այս դասակարգման հիմքում ընկած է նորմատիվայնության չափանիշը: Եթե իրավունքը մեկնաբանվում է որպես պետության

կողմից ապահովվող նորմերի համակարգ, ապա դա իրավահասկացման, այսպես կոչված «նեղ» կամ նորմատիվային իրավահասկացումն է: Իսկ եթե նորմատիվայնության հատկանիշի հետ իրավունքի հասկացության մեջ մտնում են նաև իրավահարաբերությունները,իրավագիտակցությունը, ապա նման իրավահասկացումը տվյալ դասակարգման շրջանակներում համարվում է «լայն»:

Իր առանձնահատկության պատճառով (որպես չափանիշ նորմատիվայնության հատկանիշի ընդունումը) տվյալ տիպաբանությունը կիրառվում է գլխավորապես և, առաջին հերթին, իրավունքի նորմատիվ հասկացման շրջանակներում:

Ինչպես նշում է «իրավունքի ժամանակակից նորմատիվային հասկացման» ջատագով Մ. Բայտինը, տվյալ հարցի վերաբերյալ «տարբեր գիտնականների առավել ուշադրության արժանի հայացքների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք չեն հերքում եզրակացությունն առ այն, որ...-հայրենական իրավագիտության զարգացման ընթացքում ձևավորվեցին իրավահասկացման երկու ուղղություն՝ նորմատիվային և լայն» [44]: Ընդորում, լայն մոտեցմանը, «ի տարբերություն նորմատիվայինի, հատուկ է իրավունքի տակ հասկանալ ոչ միայն նրա նորմերը, այլ և իրավական երևույթները' ընդհուպ մինչև իրավունքի նույնացումը հասարակության համակարգի հետ, մինչև իրավունքի պոկումը պետությունից, բնական իրավունքի հակադրումը պոզիտիվայինի, այսինքն, պետության մեջ պաշտոնապես գործող իրավունքին, իրավունքի և օրենքի «իրավական» և «ոչ իրավական» (հակաիրավական) օրենքի տարբերակում և այլն» [45]:

Նորմատիվային իրավահասկացման դիրքերից Մ. Ի. Բայտինը քննադատորեն է գնահատում Վ. Ս. Ներսեսյանցին առաջներում առաջարկված տիպաբանությունը, որի շրջանակներում առանձնացվում է երեք հիմնական մոտեցում, նորմատիվային, լայն, և մոտեցում, «որի ներկայացուցիչները հիմնավորում են այնպիսի հասկացում (և հասկացություն), որը ելնում է իրավունքի և օրենքի տարբերակման հայեցակարգից» [46]: Մ. Ի. Բայտինը մասնավորապես նշում է, «չկան որևէ համոզիչ հիմքեր նորմատիվային և լայն մոտեցման հետ մեկտեղ առանձնացնելու որպես ինքնուրույն նաև երրորդ մոտեցումը, քանի որ Վ. Ս. Ներսեսյանցի կողմից դրա հետևորդների թվին դասվող իրավունքի և օրենքի տարբերակման կողմնակիցները օգտագործում են տվյալ հայեցակարգը որպես իրավունքի լայն հասկացման այս կամ այն տարբերակի հիմնական ապացույցներից մեկը» [47]: Համաձայն Մ.Ի. Բայտինի, դա ամբողջովին վերաբերում է նաև հենց Վ.Ս. Ներսեսյանցի հայեցակարգին [48]:

Հարկ է նշել, որ որպես ունիվերսալ դասակարգիչ չափանիշ վերցված իրավունքի նոմատիվայնության հատկանիշը, որը թույլ է տալիս բնորոշել այս կամ այն իրավահասկացման «լայնությունը», այնքան էլ ակներև չէ, որքան թվում է նորմատիվային մոտեցման կողմնակիցներին [49]: Որպես ելակետ Մ.Ի. Բայտինը առաջարկում է ընդունել իր իսկ կողմից որպես հիմնական պարտադրվող նորմատիվայնության հատկանիշը: Սակայն եթե այդ հատկանիշը իսկապես այդքան հաճախ առաջ է քաշվում որպես հիմնական ժամանակակից իրավական գիտության մեջ, դա ամենևին չի նշանակում, որ այն ունիվերսալ է որպես իրավահասկացման տիպերի դասակարգման չափանիշ և ընդունելի է իրավունքի ընդհանուր տեսության համար:

Հայտնի է, որ իրավական ոչ բոլոր ուսմունքներն են մեկնում իրավունքը որպես նորմերի համակարգ: Այսպես, ծայրահեղ ռեալիստները իրավական նորմը հայտարարում են առասպել, պատրանք, ֆիկցիա [50]: «Նեղ» իրավահասկացումը կլինի այն, որի շրջանակներում իրավունքը մեկնաբանվում է որպես դատական որոշում կոնկրետ գործով, կամ էլ նույնիսկ որպես բուն սոցիալական հարաբերություն (Գ.Ֆրենկ): Իսկ «կենդանի իրավունքի» հասկացությանը նորմատիվայնության պես հատկանիշի ավելացումը իրենից, ըստ էության, կնշանակի այդ հասկացության «լայնեցում»:

Իրավագիտական գրականության մեջ առաջարկվում է իրավահասկացման տիպաբանական դասակարգում ըստ «տեսություն-պրակտիկա» չափանիշի: Այսպես, Ա. Վ. Պոլյակովը առանձնացնում է «իրավահասկացման տիպերի դասակարգման երկու հիմք», որոնց համապատասխան առանձնացվում են պրակտիկ և տեսական տիպերը: «Իրավահասկացման պրակտիկ (գործնական) տիպը,- գրում է հեղինակը, արտացոլվում է հասարակական իրավական գիտակցության մեջ որպես առավել ընդհանուր հատկանիշներ, որոնք բնութագրում են հասարակության վերաբերմունքը իրավունքի հանդեպ, նրա հատուկ «իրավատեսողությունը» և «իրավազգացողությունը»: ամեն քաղաքակրթություն ունի իավահասկացման իր սեփական տիպը: Կարելի է առանձնացնել նաև ավելի ընդհանուր խմբեր, օրինակ, Արևելքի և Արևմուտքի իրավահասկացումը»: Ի տարբերություն պրակտիկ իրավահասկացման երկրորդ՝ տեսական տիպը «ձևակերպված է հայեցակարգորեն, իսկ արժեքային պահերը նրանում գաղափարայնացված են և հաճախ քողարկված: Տեսական իր զարգացման ընթացքում արևմտյան իրավական միտքը ձևակերպել է իրավունքի հասկացման վեաբերյալ երեք հիմնական տեսական մոտեցում (իրավահասկացման երեք տեսակներ), բնական-իրավական, էթատիկ (ազատական) և սոցիոլոգիական» [51]:

Հիմնարար և գիտական-ճանաչողական առումով բավականաչափ հետաքրքիր է Ի. Լ. Չեստնովի կողմից առաջարկված իրավահասկացման տիպերի դասակագումը: Ելնելով «գիտականության չափանիշը ձևավորող ռացիոնալության երեք տիպերից»[52], գիտնականը առանձնացնում է դասակարգման երեք չափանիշ, փիլիսոփայական, սոցիոլոգիական, պատմա-մշակութային:

Փիլիսոփայական չափանիշը ենթադրում է իրավահասկացման տարաբաժանումը տիպերի ըստ որոշակի փիլիսոփայական հայեցակարգին նրանց պատկանելիության սկզբունքի: Փիլիսոփայական չափանիշի շրջանակներում Լ.Ի. Չեստնովը որպես դասակարգիչ հիմքեր է դիտարկում փիլիսոփայական զույգ կատեգորիաներ. «նյութական» և «իդեալական» (համապատասխանաբար առանձնացնելով իրավահասկացման մատերիալիստական և իդեալիստական տիպերը), ինչպես նաև «բնական» և «արհեստական կատեգորիաները: Ընդ որում, համաձայն գիտնականի, բնականության չափանիշին համապատասխանում են իրավունքի պատմական դպրոցը, Մ.Մ. Կովալևսկու իրավունքի գենետիկական սոցիոլոգիայի, հեգելյան իրավունքի փիլիսոփայությունը, աուտենտիկ մարքսիզմը: Արհեստականության չափանիշին են համապատասխանում XIX և XX դարերի իրավաբանական պոզիտիվիզմը, ԱՄՆ-ի ժամանակակից գործիքայնությունը (ինստրումենտալիզմ), ինչպես նաև իրավունքի սոցիոլոգիայի որոշ տարբերակները [53]: Լ.

Ի. Չեստնովի առաջարկած տիպաբանության համաձայն, սոցիոլոգիական չափանիշը կապված է «գիտության սոցիոլոգիայի հետ, որը հիմնական ուշադրությունը դարձնում է ոչ թե կոգնիտիվ (մեթոդաբանական կամ իմացաբանական) ինստիտուտացմանը, այլ նրա «արտաքին»՝ սոցիալական գործոններին»: Այն չափանիշին համապատասխան առանձնացնում են իրավահասկացման այնպիսի տիպեր, ինչպիսիք են իրավաբանական պոզիտիվիզմը (դոգմատիզմը), բնական իրավունքի արդի տեսությունները, իրավունքի սոցիոլոգիական ուսմունքները [54]:

Պատմա-մշակութային չափանիշը Լ.Ի. Չեստնովը կապում է տարբեր դարաշրջանների և տարբեր ժողովուրդների իրավահասկացման տարբերությունների հետ (փաստորեն ըստ կրոնական սկզբունքի): Այս տարաբաժանման շրջանակներում առանձնացվում են իրավահասկացման հետևյալ տիպերը, մերձավոր-արևելյան քաղաքակրթության իրավահասկացումը (պայմանավորված իսլամական ավանդույթի ազդեցությամբ), հնդկական-բուդդայական քաղաքակրթության իրավահասկացություն, չինական-կոնֆուցիական քաղաքակրթության իրավահասկացում, ճապոնական քաղաքակրթության իրավահասկացում, արևմտյան (քրիստոնեական) քաղաքակրթության իրավահասկացում, ռուսաստանյան (սլավոնական) իրավահասկացում [55]:

Առաջարկելով դասակարգել իրավահասկացման տիպերը ըստ փիլիսոփայական, սոցիոլոգիական և պատմա-մշակութային չափանիշների, Լ.Ի. Չեստնովը նշում է, որ «իրավահասկացման տիպերի համարժեք նկարագրման համար դասակարգման այս երեք չափանիշները պետք է ցույց տրվեն որպես մեկը մյուսին փոխլրացնող, քանի որ դրանցից ոչ մեկը չի տալիս իրավահասկացման ամբողջական պատկերը: Այսպես, փիլիսոփայական չափանիշը տառապում է մտահայեցողությամբ, սոցիալականը՝ ընդհակառակը, պակասում է հայեցողականությունը իրերի դրության փաստական բացատրման առումով, իսկ պատմա-մշակութային չափանիշները թեև, կարծես, զերծ է այս թերություններից, սակայն սահմանափակված է կոնկրետ քաղաքակրթության նեղ սահմաններով: Եվ միայն երեքը միասին կարող են այս կամ այն չափով ճիշտ արտացոլել իրավահասկացումը» [56]:

Ամփոփելով վերը շարադրվածը, կարելի է արձանագրել, որ ժամանակակից իրավաբանական գիտության մեջ նկատելի է իրավահասկացման տեսական տիպաբանությունների կառուցման ընդհանուր միտում: Դրա հետ մեկտեղ տարբեր մոտեցումների հեղինակները աշխատում են ոչ միայն բացահայտել իրավահասկացման տարբեր տիպերը դրանց բազմազանության մեջ, այլև կառուցել դրանց համակարգը' համապատասխան իրենց հայեցակարգերին բնորոշ կամ, առնվազն, նրանց մոտ դասակարգման չափանիշների: Այդ չափանիշների բացահայտումը, մեր կարծիքով, անհրաժեշտաբար բերում է իրավունքի մոնոպատկերից դեպի բազմապիսության ընկալման, դեպի գիտակցման այն բանի, որ իրավունքը սոցիալական բարդ երևույթ է, որը կարող է դրսևորվել տարբեր կերպ: Այսպիսով, գիտական տարբեր հայեցակարգերի կողմնակիցները տարբեր ճանապարհներով գալիս են այն ընդհանուր գաղափարին, որ անհրաժեշտ է ինտեգրալ, միասնական որոշակի իրավահասկացում: Այստեղ, սակայն, ծագում է հարցերի մի ամբողջ համալիր, կապված հենց ինտեգրման սկզբունքների վերաբերյալ տարբեր մոտեցումների հետ, միասնական համակարգի մասին խոսելու հնարավորություն տվող

օրինաչափությունների, փոխկապակցությունների ոչ միանման ընկալման հետ: Իրավահասկացման հիմնահարցը աստիճանաբար տեղափոխվում է այդ նոր հարթություն, որտեղ հիմնական է դառնում փիլիսոփայական հենքի մասին հարցը՝ հենքի, որը թույլ կտա դիտարկել իրավունքը ինչպես իր տարբեր դրսևորումներում, այնպես էլ իր միասնության մեջ:

**Գրականության ցանկ**


1. **Սաֆարյան Գ.Հ**. Իրավահասկացման հիմնական տիպերը: Երևան - 2016:
2. **Нерсесянц В.С**. Право и закон.М., 1983.
3. Ստեփանյան Հ.Մ. Նոր իրավաըմբռնման անհրաժեշտությունը: Եվրոպրինտ, Երևան-2011:
4. **Малахов В. П.** Правосознание: природа, содержание, логика. Монография. М., 2001. С. 36.
5. Диалектика и частные науки / Под ред. Н. М. Дмитриенко, В. Ф. Сержантова, Г. А. Подкорытова, В. А. Смирнова, Б. В. Ахлибининского. Ленинград - Брянск, 1972. С. 285.
6. Андреев И. Д. О методах научного познания. М., 1964; Материалистическая диалектика и методы / естественных наук. М., 1968 и др.
7. Философский словарь / Под ред, И. Т. Фролова. М., 1980. С. 93.
8. Бабаев В. К. Понятие права // Теория государства и права. Учебник / Под ред. В. К. Бабаева. М., 1999. С. 19.
9. Диалектика и частные науки / Под ред. Н. М. Дмитриенко, В. Ф. Сержантова, Г. А. Подкорытова, В. А. Смирнова, Б. В. Ахлибининского, Ленинград ~ Брянск, 1972. С. 285.
10. Марченко М. Н**.** Проблемы теории государства и права. Учебник. М., 2001. С. 26
11. Նույն տեղում:
12. Ժամանակակից սոցիոլոգիայում կարծիք է հայտնվում, որ իրավական իրողությունը անհրաժեշտ է ուսումնասիրել այնպիսի մեթոդներով, որոնք սկզբունքորեն տարբերվում են բնագիտության մեջ իշխող մեթոդներից: Այսպես, օրինակ, Լ. Ի. Չեստնովը, դիմելով սոցիոլոգիայի տերմինաբանությանը, անվանում է դրանք իրավաբանական հետազոտման «որակական մեթոդներ»: Այդ մեթոդների թվին առաջարկվում է դասել, օինակ, գենետիկական ու կառուցվածքային դեկոնստրուկցիայի, միացված դիտարկման մեթոդը, առանձնակի դեպքի (օբյեկտի) մենագրական մեթոդը' դրա փոխկապակցությունների առավելագույն քանակի նկարագրմամբ, կենսագրական մեթոդը, իմաստաբանական վերլուծության մեթոդը և այլն: (Честное И. Л**.** Дачественные методы юридического исследования // Ленинградский юридический журнал. 2004. № 1. С. 20.):
13. Այստեղ և հետագայում մենք ելնում ենք «տիպաբանություն» և «տիպաբանում» տերմինների ոչ միանման մեկնումից: Տիպաբանման տակ անհրաժեշտ է հասկանալ այս կամ այն երևույթների ուսումնասիրման մեթոդաբանական մոտեցումը: Տիպաբանման տակ, իր հերթին, հարկ է հասկանալ տիպաբանության շրջանակներում օգտագործվող բուն տերմինը:
14. Философский энциклопедический словарь. М., 1983. С. 685.
15. Философский энциклопедический словарь. М., 1983. С. 685.
16. **,** օրինակ, **Четвернин В. А**. Понятия права и государства. Введение в курс теории права и государства. М., 1997. С. 11; Бернацкий Г. Г. Евгений Николаевич Трубецкой: естественное право и религия. СПб., 1999. С. 39-51; Нерсесянц В. С. Философия права: Учебник для вузов. М., 2001. С. 32-35 и др.

17. **Кондаков Н. И.** Логический словарь-справочник. М., 1975. С. 595.

18. **Поляков А. В.** Общая теория права. Курс лекций. СПб., 2001, С. 37.

19. **Нерсесянц В. С**. Философия права Гегеля. М., 1998. С. 132.

20. **Баранов П. П**. **Щпак В. Ю**., Несмеянов Е. Е., Лукьянов А. К, Контарев А. А. *Философия права:* Учебное пособие. Ростов-на-Дону, 2002. С. 32.

21. Դասակարգման տակ ժամանակակից գիտության մեջ հասկանում են գիտության որևէ բնագավառում (մեր դեպքում՝ իրավագիտության մեջ) համաեռթակա հասկացությունների (օբյեկտների դասի) համակարգ: Դասակարգումը, որպես կանոն, օգտագործվում է համապատասխան հասկացությունների կամ օբյեկտների դասերի միջև կապերի բացահայտման, դրանց բազմազանության մեջ կողմնորոշվելու համար, ինչպես նաև թույլ է տալիս գտնել օբյեկտի տեղը համակարգի մեջ (Философский энциклопедический словарь. М.,1983. С. 257): Իրավահասկացման տիպերի դասակարգումը, իր հերթին, ֆիքսում է դրանց միջև առկա կապերը տիպաբանական համակարգում կոնկրետ տիպի տեղը, որը ցուցում է նրա առանձնահատկություններն ու բնորոշ գծերը:

22. Философский энциклопедический словарь. М., 1983. С. 685.

23. **Бернацкий Г. Г.** Евгений Нцколевич Трубецкой: естественное право и религия. СПб., 1999. С. 48-50.

24. Նույն տեղում, էջ 50:

25. Նույն տեղում:

26. Философский энциклопедический словарь.М., 1983.С. 685

27. **Баранов П. П.,** Шпак В. Ю., Несмеянов Е. Е., Лукьянов А. И., Контарев А.Философия права: Учебное пособие. Ростов-на-Дону, 2002. С. 32.

28. Ն.Ն. Ալեքսեևը առանձնացնում է նաև իրավահասկացման ավանդական տիպերը՝ իրավաբանական դոգմատիկան, իրավաբանական սոցիոլոգիզմը և բնական իրավունքի տեսությունը: (Алексеев **Н. Н.** Основы философии права. СПб, 1999. С. 20-45):

29. օրինակ, Лившиц Р.З. Государство и право в современном обществе: необходимость новых подходов // Советское государство и право. 1990. № 10. С. 18-19; ***Лейст О. Э.*** Три концепции права// Государство и право. 1991. № 12. С. 3-11; **Честное Л. И.** Типы правопонимания // Проблемы теории права и государства / Под ред. В. П. Сальникова. СПб., 1999. С. 65-72; **Поляков А. В.** Общая теория права. Курс лекций. СПб., 2001. С. 37; **Назаренко Г. В.** Теория права и государства. М., 2001. С. 11-12 и др.

30. **Лейст О.Э.**. Три концепции права //Государство и право. № 1991. № 12.С. 7.

31. **Баскин Ю. Я.** Очерки философии права. Сыктывкар, 1996. С. 4.

32. **Нерсесянц В. С.** Философия права Гегеля. М., 1998. С. 133; ***Нерсесянц В. С.*** Философия права: Учебник для вузов. М., 2001. С. 32; Различие и соответствие права и закона как междисциплинарная проблема // Вопросы философии права. М., 1973; Из истории правовых учений: два типа правопонимания // Политические и правовые учения: проблемы исследования и преподавания. М., 1978; Право и закон. М., 1983.

33. **Нерсесянц В. С.** Философия права. Учебник для вузов. М., 2001. С. 32.

34. Նույն տեղում, էջ 34:

35. Նույն տեղում:

36. **Четверная В. А.** Понятия права и государства. Введение в курс теории права и государства. М., 1997. С. 11.

37. Նույն տեղում, էջ 37:

38. Նույն տեղում, էջ 12:

39. Նույն տեղում, էջ 37:

40. Նույն տեղում, էջ 20:

41. **Нерсесянц В. С.** Философия права Гегеля. М., 1998. С. 169-170.

42. Հարկ է նշել, որ տվյալ դեպքում խոսքը հենց ազատական-իրավաբանական հայեցակարգի շրջանակներում կառուցված իրավահասկացման տիպաբանության մասին է, այլ ոչ ընդհանուր հայեցակարգի հենքի մասին, որի հետ հեղինակը սկզբունքային պահերի մեծ մասի հետ համաձայն է:

43. 0 понимании советского права. «Круглый стол» // Советское государство и право. 1979. № 7. С. 56-74; 1979. № 8. С. 48-77.

44. **Байтин М. И.** Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков). Саратов, 2001. С.54.

45. Նույն տեղում, էջ 5:

46. Нерсесянц В.С. 1) Право: многообразие определений и единство понятия (Советское государство и право. 1983. № 10. С. 27; 2) Право и закон. М., 1983. С. 351.

47. **Байтин М. И**. Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков). Саратов, 2001. С. 44.

48. Բանավեճի մեջ մտնելով Վ. Ս. Ներսեսյանցի հետ և քննադատորեն գնահատելով նրա հայացքները, հատկապես կապված իրավահասկացման տիպաբանության հիմնահարցին, Մ. Ի. Բայտինը նկատում է, որ «թեև, նա (Վ. Ներսեսյանցը) չի համարում իրեն իրավունքի լայն հասկացման ներկայացուցիչ և նույնիսկ ճանաչում է «իրավունքի բնորոշման մեջ նորմի հետ մեկտեղ նաև դրա ածանցյալները», օրինակ, իրավահարւսբերության, իրավագիտության, սուբյեկտիվ իրավունքի թվարկման ակներև տրամաբանական անհեթեթությունը: Սակայն երբ նա, հակառակ հենց նոր մեջբերված միանգամայն ճիշտ, մեր կարծիքով, պնդմանը, գալիս է այն եզրակացության, որ «իրավական ձևերը, իրավական հարաբերությունները և այլն, հանդիսանում են իրավունքի միասնական հասկացության բաղադրիչ մասերը», նա ակնհայտորեն հանդես է գալիս իրավունքի լայն հասկացման դիրքերից: Դրա հետ մեկտեղ ուշադրություն է դարձնում տվյալ հարցի վերաբերյալ Վ. Ներսեսյանցի հատուկ դիրքորոշումը: Արժանին հատուցելով իրավունքի լայն հասկացման կողմնակիցների ջանքերին, նա միաժամանակ կարծում է, որ «իրավունքի և օրենքի հարաբերակցության տեսակետից բանավեճը այսօր տարածված իրավունքի հասկացության դեմ կրում է ոչ սկզբունքային բնույթ», քանի որ «և սրանք, և նրանք իրենց տեսական կոնստրուկցիաներում մնում են, ըստ էության, օրենսդրության սահմաններում»: Նա առաջարկում է արմատապես վերանայել իրավունքի նորմի և ընդհանրապես իրավունքի մասին այդ, իր խոսքերով ասած, «տարածված» պատկերացումները: Սակայն այն, ինչը Վ. Ս. Ներսեսյանցը համարում է իրավունքի նորմ և մտցնում է իրավունքի հասկացության մեջ, իրական կյանքում ուզում է նա թե ոչ, չեն կարող ոչ այլ ինչ, քան սովորույթներ, ավանդույթներ, սկզբունքներ, մարդկանց վարքի բարոյական կորպորատիվ, կրոնական և այլ կանոններ: Իսկ դա ոչ այլ ինչ է, քան իրավունքի լայն (չափազանց լայն) հասկացման տարբերակ, երբ դրա մեջ առաջարկվում է մտցնել ըստ էության ոչ իրավական երևույթներ և, ի տարբերություն լայն իրավահասկացման այլ կողմնակիցների, դա կոչ է արմատապես վերանայել իրավական գիտության մեջ ձևավորված պատկերացումը իրավական նորմի մասին» (Байтин М. И. Сущность права. Саратов, 2001. С. 45-46):

49. Այստեղ անհրաժեշտ է նշել, որ տվյալ դեպքում խոսքը գնում է ոչ թե նորմատիվայնության, որպես այդպիսինի, ճշտիվության, այլ որպես իրավահասկացման տիպերի դասակարգման չափանիշ օգտագործելու բուն հնարավորության մասին: Դրա հետ մեկտեղ, մեր կարծիքով, նորմատիվայնությունը, անշուշտ, պետք է դիտվի որպես իրավունքի հատկանիշներից մեկը:

50. Մանրամասն՝ **Зорькин В. Д.** Социологическая юриспруденция //История политических и правовых учений / Под ред. В. С. Нерсесянца. М., 1983. С. 613-614.

51. **Поляков А. В**. Общая теория права. Курс лекций. СПб., 2001. С. 37.

52. Լ.Ի.Չեսնովի' ռացիոնալության պատմական երեք տիպերի գաղափարը, անշուշտ արժանի է հատուկ ուշադրության, քանի որ իրրավահասկացման հիմնահարցի առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Հեղինակն իր հայեցակարգը հիմնավորում է հետևյալ կերպ, պատմականորեն կարելի է առանձնացնել գիտականության չափանիշը ձևավորող երեք տիպ: Նոր ժամանակի դարաշրջանում դա դասական ռացիոնալությունն է, հիմնված բանականության վրա: XIX դարում դրան փոխարինելու եկավ պոզիտիվիստկւսն ռացիոնալությունը, որը հենվում է, փորձի արդյունքում ստացված գիտելիքի և տրամաբանության վրա: XX դարի կեսից ձևավորվում է ռացիոնալության երրորդ տիպը' սոցիոմշակութայինը: Գիատականության առաջին երկու չափանիշները համպատասխանում էին իրավունքի փիլիսոփայությանը (նոր ժամանակի դարաշրջանում ներկայացված բնական իրավունքի տեսությամբ) և իրավաբանական պոզիտիվիզմին: Սակայն այսօր նրանք արդեն սպառել են իրենց գիտական ներուժը: Դրանց փոխարինելու եկավ իրավունքի զանազան տեսությունների բավականին խայտաբղետ մի փունջ, որոնք այս կամ այն չափով համապատասխանում էին ժամանակի առավել տարածում գտած փիլիսոփայական հոսանքներին, վերլուծական իրավաբանություն, իրավունքի ֆենոմենոլոգիա և հերմենևտիկա, իրավական էկզիստենցիալիզմ, իրավունքի մարդաբանություն և այլն: Դրանցից յուրաքանչյուրը առաջ է քաշում գիտահետազոտական ծրագրի իր չափանիշները: Հետևաբար, իրավական տեսությունները պետք է համապատասխանեն աշխարհահայեցողղական ելային սկզբունքներին, ինչպես նաև մեթոդաբանական բնույթի ավելի կոնկրետ նորմատիվների (այսպես, իրավունքի ֆենոմենոլոգիայի և հերմենևտիկայի համար դա հրաժարումն է «բնական դրույթից», այսինքն, օբյեկտի հետ մենախոսումյունից և դրա փոխարինումը հասկացում երկխոսությամբ): Սակայն գոյություն ունեն նաև որոշակի ընդհանուր սկզբունքներ, որոնք ճանաչվում են գիտական ողջ հանրության կողմից: Դրանք բավականին ընդհանուր սկզբունքներ են. շարադրանքի պարզություն, պրակտիկայում գիտելիքների կիրառման (իրական կամ պոտենցիալ) հնարավորություն, համապատասխանություն առողջ դատողության ինքնին հասկանալի (ժամանակակից մարդկանց մեծամասնության համար) պահանջներին, գիտական արդյունքների ստուգման հնարավորություն»: Այնուհետև Լ. Ի. Չեստնովը նշում է, որ «աշխարհահայեցողական (փիլիսոփայական) սկզբունքները բնորոշում են հետազոտման առարկան և ճանաչման մեթոդները, իրավունքի տեսության կառուցվածքը, պրակտիկայի հետ դրա փոխգործակցությունը, իրավունքի տեսության տեղը այլ գիտությունների համակարգում, ինչպես նաև գիտելիքների ֆիքսման և փոխանցման այս կամ այն եղանակները: Այս պարամետրերը կարելի է համարել իրավունքի տեսության գիտականության չափանիշներ» (Честнов Л.И. Теория права и государства как наука // Проблемы теории права и государства / Под ред. В. П. Сальникова. СПб., 1999. С. 13):

53. Честное Л. И. Теория права и государства как наука // Проблемы теории права и государства / Под ред. В. П. Сальникова. СПб., 1999. С. 63-64, Քիչ առաջ ընկնելով նշենք, որ Լ. Ի. Չեստնովը միանգամայն ճիշտ է նշել իրավահասկացման տիպաբանության, մեր կարծիքով, ամենահիմնական ու կարևորագույն չափանիշը: «Բնականի» և «արհեստականի» հիմնախնդրի լուծումը իրավունքի մեջ վերջնական հաշվով բերում է ոչ միայն իրավահասկացման գլոբալ երկու ուղղությունների վաղնջական հակամարտության էության, այլև բուն իրավունքի էության հասկացումի:

54. Նույն տեղում, էջ 65-72:
55. Նույն տեղում, էջ 65-72:
56. Честнов Л. И. Теория права и государства как наука // Проблемы теории права и государства / Под ред. В. П. Сальникова. СПб., 1999. С. 58.

**Сафарян Г., Арутунян Л. О ПРОБЛЕМЕ ПРИРОДЫ ПРАВА И ТИПОЛОГИИ ПРАВОПОНИМАНИЯ.** В данной статье авторы всесторонне анализируют проблемы природы права и типологии правопонимания, а также обсуждают методологические подходы своего научного исследования с точки зрения современной юриспруденции и научного знания.

***Ключевые слова:*** право, юриспруденция, научная концепция, методологические основы, диалектические и специальные методы, существование права, толкования.

**Safaryan G., Harutyunyan L. ON THE PROBLEM OF THE NATURE OF LAW AND THE TYPOLOGY OF LEGAL UNDERSTANDING.** In this article, the authors thoroughly analyze the problems of the nature of law and the typology of legal understanding, as well as discuss the methodological approaches of their scientific research from the point of view of modern jurisprudence and scientific knowledge.

***Keywords:*** scientific concept, methodological foundations, legal interpretations.